«ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

------ ---------- 2023 թ. N ------- Ն

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներում և մրցանակաբաշխություններում մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին անվանական թոշակի վճարման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներում և մրցանակաբաշխություններում մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին անվանական թոշակի չափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված 1

ՀՀ կառավարության 2023 թվականի ---------- ------- -ի

N ------ Ն որոշման

ԿԱՐԳ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոներում և մրցանակաբաշխություններում մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին անվանական թոշակի (այսուհետ՝ անվանական թոշակ) վճարման հետ կապված հարաբերությունները։
2. Անվանական թոշակ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մշակույթի ոլորտի այն գործիչներին, որոնք որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ մասնակցել են հավելված 2-ում ներառված միջազգային հեղինակավոր փառատոներին և մրցանակաբաշխություններին և արժանացել են մրցանակի։
3. Անվանական թոշակի հատկացումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն)՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով։

4. Անվանական թոշակի վճարումն իրականացվում է ամսական պարբերականությամբ, մեկ տարի ժամկետով, հավելված 2-ում նշված գումարի չափով, որը չի ներառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը և պարտադիր այլ վճարները:

5. Միևնույն անձը սույն կարգի 2-րդ կետում նշված արդյունքներից (մրցանակներից) մեկից ավելի արդյունք ունենալու դեպքում վճարվում է դրանցից յուրաքանչյուրի համար:

6. Ոչ անհատական (խմբային) արդյունքի դեպքում անվանական թոշակի հավելված 2-ում նշված գումարի չափը բաշխվում է խմբի անդամների միջև հավասարաչափ, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ հատկացվում է տվյալ իրավաբանական անձին, որի գործադիր մարմնի որոշմամբ իրականացվում է անվանական թոշակի բաշխումը:

7. Անվանական թոշակի թեկնածուները կամ վերջիններիս գործատու հանդիսացող իրավաբանական անձիք սույն կարգի 2-րդ կետում նշված արդյունքներ ցուցաբերելուց հետո վեց ամսվա ընթացքում (2023 թվականի արդյունքների համար՝ մեկ տարվա ընթացքում) անվանական թոշակ ստանալու նպատակով կարող են դիմել Նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով միջազգային հեղինակավոր փառատոնների և մրցանակաբաշխությունների մրցանակի արժանանալու փաստը վկայող նյութեր, ինչպես նաև անվանական թոշակի թեկնածուի և նրա բանկային տվյալները:

8. Անվանական թոշակի թեկնածուների հաշվառման, փաստաթղթերի հավաքման և անվանական թոշակի թեկնածուների հետագա առաջադրման նպատակով նախարարի կողմից ստեղծվում է հանձնաժողով: Հանձնաժողովի կազմը ձևավորվում է նախարարության 3, մշակույթի ոլորտի ստեղծագործական միությունների մեկական ներկայացուցիչներից:
9. Սույն կարգի 8-րդ կետում նշված հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է եռամսյակային պարբերականությամբ, քննարկում է այդ եռամսյակի ընթացքում Նախարարություն դիմած անվանական թոշակի թեկնածուների հայտադիմումները, և համապատասխան առաջարկություններ ներկայացնում նախարարին:

Հավելված 2

ՀՀ կառավարության 2023 թվականի ---------- ------- -ի

N ------ Ն որոշման

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿԻ ՉԱՓԵՐԸ

1. ԱՐՎԵՍՏԻ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿԻ ՉԱՓԵՐԸ

N	Փառատոնի կամ մրցանակաբաշխության անվանումը	Երկիրը	Հաճախականությ
I. **ԱՇԽԱՐՀԻ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆԵՐԸ**			
1. Թատերավեստ			
1	Էդինբուրգի Միջազգային փառատոն	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	ամենամյա
2	Ավինյոնի փառատոն	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա
3	Շառլվիլ Մեզիերս տիկնիկային համաշխարհային փառատոն	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա
4	«Իմաջինա» (Immagina) միջազգային տիկնիկային փառատոն	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
5	Վիներ Ֆեստվոխեն	Ավստրիայի Հանրապետություն	ամենամյա
6	ԷյԷյՍիԹի ուորդ ֆեստ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա
7	Պլովդիվի միջազգային տիկնիկային փառատոն «Երեքը շատ են երկուսը քիչ»	Բուլղարիայի Հանրապետություն	ամենամյա
8	«Գոլդեն Մագնոլիա» միջազգային տիկնիկային փառատոն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	ամենամյա
9	«ԿՈՒԿԱՐՏ»	Ռուսաստանի Դաշնություն	ամենամյա
10	«Յունիդրամ» միջազգային փառատոն	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա
2. Կերպարվեստ			
1	Վենետիկի Բիեննալե	Իտալիայի Հանրապետություն	երկամյա

2	Պրահայի քվադրինալե	Չեխիայի Հանրապետություն	քառամյա
3	Ֆլորենցիայի բիեննալե	Իտալիայի Հանրապետություն	երկամյա
4	Լիվերպուլի բիեննալե	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	երկամյա

3. Երաժշտարվեստ

3.1. երաժշտական (այդ թվում օպերային) փառատոներ

1	Զալցբուրգի փառատոն	Ավստրիայի Հանրապետություն	ամենամյա

3.2. երաժշտական մրցույթներ (բազմաժանր)

1	Եղիսաբեթ թագուհու մրցույթ (դաշնամուր, ջութակ, վոկալ)	Բելգիայի Թագավորություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
2	Պ. Չայկովսկու անվան միջազգային մրցույթ (դաշնամուր, ջութակ, թավջութակ, վոկալ, փողային գործիքներ)	Ռուսաստանի Դաշնություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
3	Միջազգայիմ երաժշտական մրցույթ ԱՌԴ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
4	Ռոբերտ Շումանի անվան միջազգային մրցույթ (դաշնամուր, տղամարդ-վոկալ, կանացի-վոկալ)	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
5	Յոհան Սեբաստիան Բախ միջազգային մրցույթ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
6	Թիբոր-Կրեսպինի անվան մրցույթ (դաշնամուր, ջութակ, վոկալ)	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
7	Կարլ Նիլսենի անվան միջազգային մրցույթ (դաշնամուր, կլառնետ, ֆլեյտա)	Դանիայի Թագավորություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
8	Մ.Ռոստալի անվան միջազգային մրցույթ (ջութակ, ալտ)	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
9	Երաժիշտ-կատարողների միջազգային մրցույթ նվագախմբային գործիքների վրա (վալթհորն, տուբա)	Ռուսաստանի Դաշնություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ
10	«Պրահայի գարուն» միջազգային երաժշտական մրցույթ	Չեխիայի Հանրապետություն	ամենամյա, յուրաքանչյուր տա անվանակարգ

3.3. երաժշտական մրցույթներ (Դաշնամուր)

1	Շոպենի անվան դաշնամուրի	Լեհաստանի	հնգամյա

	մրցույթ	Հանրապետություն	
2	Ֆրանց Լիստի անվան դաշնամուրի միջազգային մրցույթ	Նիդերլանդների Թագավորություն	եռամյա
3	Վան Կլայբերն դաշնամուրային մրցույթ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	քառամյա
4	Բեթհովենի անվան միջազգային մրցույթ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	երկամյա
5	Գեզա Անդայի անվան դաշնամուրի մրցույթ	Շվեյցարիայի Համադաշնություն	եռամյա
6	Հանս Գաբոր Բելվեդեր մրցույթ	Ավստրիայի Հանրապետություն	ամենամյա

3.4. երաժշտական մրցույթներ (ջութակ)

1	Պագանինիի անվան ջութակահարների մրցույթ	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
2	Սիբելիուսի անվան ջութակահարների մրցույթ	Ֆինլանդիայի Հանրապետություն	հնգամյա
3	Տիբոր Վարգա ջութակահարների միջազգային մրցույթ	Շվեյցարիայի Համադաշնություն	եռամյա
4	Յոզեֆ Յոահիմի անվ. ջութակահարների միջազգային մրցույթ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	եռամյա
5	Հենրիկ Վիենավսկու անվան ջութակահարների միջազգային մրցույթ	Լեհաստանի Հանրապետություն	հնգամյա

3.5. երաժշտական մրցույթներ (թավջութակ)

1	Մստիսլավ Ռոստրոպովիչի անվան թավջութակահարների միջազգային մրցույթ	Ռուսաստանի Դաշնություն	քառամյա
2	Վիտոլդի Լուտոսլավսկու անվան թավջութակի միջազգային մրցույթ	Լեհաստանի Հանրապետություն	երկամյա

3.6. երաժշտական մրցույթներ (կոնտրաբաս, շեփոր, կիթառ, դիրիժորություն, կոմպոզի

1	Տոկիոյի միջազգային դիրիժորական մրցույթ	Ճապոնիա	եռամյա
2	Գուստավ Մալերի դիրիժորական մրցույթ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	եռամյա
3	Յ.Մ. Շպերգերի անվան միջազգային մրցույթ (կոնտրաբաս)	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա

4	Գ. Բոտտեսինիի անվան միջազգային մրցույթ (կոնտրաբաս)	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
5	Ժնեվի միջազգային երաժշտական կոմպոզիտորական մրցույթ	Շվեյցարիայի Համադաշնություն	ամենամյա
6	Մ. Անդրեի անվան միջազգային մրցույթ (շեփոր)	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա
7	դասական կիթառի միջազգային մրցույթ	Ավստրիայի Հանրապետություն	ամենամյա
8	Բեզանսոնի երիտասարդ դիրիժորների միջազգային մրցույթ-փառատոն	Ֆրանսիայի Հանրապետություն	երկամյա
9	Կիթառի միջազգային մրցույթ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա
10	Օպերային դիրիժորների միջազգային մրցույթ	Բելգիայի Թագավորություն	եռամյա
11	Արտուրո Տոսկանինիի դիրիժորների միջազգային մրցույթ	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա

3.7. վոկալի մրցույթներ և փառատոներ

1	Օպերալիա. Պլասիդո Դոքմինգո Համաշխարհային օպերային երգի մրցույթ	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
2	Էլիանոր Մքքոլում Հյուսթոն Գրանդ օպերա միջազգային մրցույթ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա
3	Ստանիսլավ Մոնյուշկո օպերային միջազգային մրվույթ	Լեհաստանի Հանրապետություն	եռամյա
4	Ելենա Օբրազցովայի անվան միջազգային մրցույթ	Ռուսաստանի Դաշնություն	երկամյա
5	Մարիա Կալլաս Գրան պրի-Օպերա Վոկալի միջազգային մրցույթ	Հունաստանի Հանրապետություն	ամենամյա
6	Օտտավիո Ձինոյի օպերային միջազգային մրցույթ	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
7	Բոլշայա Օպերա (Կուլտուրա ալիքի նախագիծ)	Ռուսաստանի Դաշնություն	ամենամյա
8	Կլաուդիա Տայև միջազգային օպերային միջազգային մրցույթ	Էստոնիայի Հանրապետություն	ամենամյա
9	«Քարդիֆի ձայները» BBC-ի օպերային երգեցողության	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային	երկամյա

	միջազգային մրցույթ	Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	
10	Բոգաչյովայի անվան Սանկտ Պետերբուրգի միջազգային վոկալիստների մրցույթ	Ռուսաստանի Դաշնություն	երկամյա
11	Ֆիորենցա Չեդոլինզ ՍՈՒ միջազգային օպերային օնլայն մրցույթ	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա

4. Կինոարվեստ

4.1. մրցանակաբաշխություններ

1	Ամերիկյան կինոակադեմիաի Օսկար մրցանակաբաշխություն	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա
2	Ոսկե Գլոբուս	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա
3	Եվրոպական կինոակադեմիայի մրցանակ	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա
4	Ասիա-Խաղաղօվկիանոսյան կինոմրցանակ	Ավստրալիական Միություն	ամենամյա
5	Բրիտանական կինոակադեմիայի ԲԱՖՏԱ մրցանակ	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն	ամենամյա
6	Ֆրանսիական կինոակադեմիայի Սեզար մրցանակաբաշխություն	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա

4.2. համաշխարհային Ա դասի կինոփառատոներ

1	Բեռլինի միջազգային կինոփառատոն	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա ամենամյա
2	Կաննի միջազգային կինոփառատոն	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա ամենամյա
3	Լոկառնոի կինոփառատոն	Շվեյցարիայի Համադաշնություն	ամենամյա ամենամյա
4	Սան Սեբաստիանի միջազգային կինոփառատոն	Իսպանիայի Թագավորություն	ամենամյա ամենամյա
5	Վենետիկի միջազգային կինոփառատոն	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա ամենամյա
6	Կահիրեի միջազգային կինոփառատոն	Եգիպտոսի Արաբական Հանրապետություն	ամենամյա ամենամյա
7	Կառլովի վարի միջազգային կինոփառատոն	Չեխիայի Հանրապետություն	ամենամյա ամենամյա
8	Շանհայի միջազգային կինոփառատոն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	ամենամյա ամենամյա
9	Ֆաջր միջազգային կինոփառատոն	Իրանի Իսլամական Հանրապետություն	ամենամյա ամենամյա
10	Գոա - հնդկական միջազգային կինոփառատոն	Հնդկաստանի Հանրապետություն	ամենամյա ամենամյա
11	Տալլինի ՝ՍԱՀ գիշերներ՝ կինոփառատոն	Էստոնիայի Հանրապետություն	ամենամյա ամենամյա

4.3. Ա դասի կինոփառատոներ ըստ ուղղվածության

1	Բուսանի միջազգային	Կորեայի	ամենամյա

	կինոփառատոն	Հանրապետություն	
2	Տորոնտոյի միջազգային կինոփառատոն	Կանադա	ամենամյա
3	Կարճամետրաժ ֆիլմերի միջազգային փառատոն Օբերհաուզենում	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա
4	Կրակովի միջազգային կինոփառատոն	Լեհաստանի Հանրապետություն	ամենամյա
5	Թուրինի կինոփառատոն	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
6	Սոֆիայի միջազգային կինոփառատոն	Բուլղարիայի Հանրապետություն	ամենամյա
7	Խիխոնի միջազգային կինոփառատոն	Իսպանիայի Թագավորություն	ամենամյա
8	Տրանսիլվանիայի միջազգային կինոփառատոն	Ռումինիայի Հանրապետություն	ամենամյա
5. Պարարվեստ			
1	Դանս օփեն բալետի միջազգային փառատոն	Ռուսաստանի Դաշնություն	ամենամյա
2	Լոզանի միջազգային բալետային մրցույթ	Շվեյցարիայի Համադաշնություն	ամենամյա
3	Բալետի արտիստների միջազգային մրցույթ Վարնայում	Բուլղարիայի Հանրապետություն	ամենամյա
4	Բալետի միջազգային մրցույթ «Ջեքսոն»	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա
5	Ռուդոլֆ Նուրիևի անվան փառատոն	Ռուսաստանի Դաշնություն	ամենայմա
6	«Արաբեսկ» մրցույթ	Ռուսաստանի Դաշնություն	ամենամյա
7	«Ոսկե պուանտ»	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա
8	Պարի միջազգային մրցույթ-փառատոն «Դանսինգ Իտալի»	Իտալիայի Հանրապետություն, Պեզարո	ամենամյա
9	Միջազգային ազգագրական պարի փառատոն Բարսելոնայում	Իսպանիայի Թագավորություն	ամենամյան
10	Միջազգային ազգագրական պարի փառատոն Հռոմում	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
11	Միջազգային ազգագրական պարի փառատոն Ռիմինիում	Իտալիայի Հանրապետություն	ամենամյա
12	Միջազգային ազգագրական պարի փառատոն Սալոնիկում	Հունաստանի Հանրապետություն	ամենամյա

13	Միջազգային ազգագրական պարի փառատոն Պրահայում	Չեխիայի Հանրապետություն	ամենամյա
14	Միջազգային ազգագրական պարի փառատոն Բելգրադում	Սերբիայի Հանրապետություն	ամենամյա

II. **ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՓԱՌԱՏՈՆԵՐԸ**

1. Թատերավեստ

1	Պեկինի միջազգային տիկնիկային փառատոն	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	ամենամյա
2	Չունչոն տիկնիկային փառատոն	Կորեայի Հանրապետություն	ամենամյա ամենամյա
3	Չեխովյան փառատոն	Ռուսաստանի Դաշնություն	ամենամյա
4	Բենգալուռույի միջազգային տիկնիկային փառատոն	Հնդկաստանի Հանրապետություն	ամենամյա
5	Կահիրեյի ժամանակակից թատրոնի միջազգային փառատոն	Եգիպտոսի Արաբական Հանրապետություն	ամենամյա
6	Թբիլիսիի միջազգային թատերական փառատոն	Վրաստան	ամենամյա
7	Բեվերլիի տիկնիկային թատրոնների փառատոն	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա

2. Կերպարվեստ

1	Լառնակայի Բիեննալե	Կիպրոսի Հանրապետություն	երկամյա
2	Մալթայի բիեննալե	Մալթայի Հանրապետություն	երկամյա

3. Կինոարվեստ

1	Սարաևոյի կինոփառատոն	Բոսնիա և Հերցեգովինա	ամենամյա
2	Ռոտերդամի միջազգային կինոփառատոն	Նիդերլանդների Թագավորություն	ամենամյա
3	Վավերագրական կինոյի միջազգային փառատոն Ամստերդամում (IDFA)	Նիդերլանդների Թագավորություն	ամենամյա
4	Սանդենս Կինոփառատոն	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	ամենամյա
5	Կարճամետրաժ ֆիլմերի միջազգային փառատոն Կլերմոն-Ֆերանում	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա
6	Անիմացիոն ֆիլմերի միջազգային փառատոն Անսիում	Ֆրանսիայի Հանրապետություն	ամենամյա
7	Մուլտֆիլմերի և անիմացիայի միջազգային փառատոն Չինաստանում	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	ամենամյա
8	Վավերագրական կինոյի և անիմացիայի միջազգային	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	ամենամյա

	փառատոն Լայպցիգում (DOK Leipzig)		

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԱԲ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՈՇԱԿԻ ՉԱՓԵՐԸ

N	Փառատոնի կամ մրցանակաբաշխության անվանումը	Կառույցը	Հաճախականությ
1	Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) Կրթության և մշակութային գործունեության միջազգային կոմիտեի մրցանակ	ԻԿՕՄ	ամենամյա
2	Եվրոպայի խորհրդի թանգարանների ոլորտի մրցանակաբաշություն	Եվրոպայի խորհուրդ	ամենամյա
3	Եվրոպա Նոստրա համաեվրոպական կազմակերպության մրցանակաբաշխություն	Եվրոպա Նոստրա համաեվրոպական կազմակերպություն	ամենամյա